



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 1 » հուլիսի 2021թ.

ՀՐԱՄԱՆ N 336-Ա

«ԱԶԻՄՈՒՏ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈՐԿԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «2» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավիացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասով, «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «զ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով և հիմք ընդունելով «Ազիմուտ» ավիաընկերություն» բաժնետիրական ընկերության 2021 թվականի հունիսի 18-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Ազիմուտ» ավիաընկերություն» բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Կալուզա/ՍՍՍԲ/-Երևան/ՍԴԿԶ/-Կալուզա/ՍՍՍԲ/ երթուղով՝ 2021 թվականի հուլիսի 18-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 24-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ

Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ Ընկերությունը օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածում 2021 թվականի հուլիսի 18-ից մինչև 2021 թվականի հոկտեմբերի 24-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ՝ Կալուգա/ՍՍՍԿ/-Երևան/ՍԴԿԶ/-Կալուգա/ՍՍՍԿ/ երթուղով Հայաստանի Հանրապետություն տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացմամբ բավարարում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթերի հաճախականությունների պահանջներին, և հետևաբար սույն կետում նշված Երևան/ՍԴԿԶ/-Կալուգա/ՍՍՍԿ/ երթուղով մեկնող ուղևորների վրա տարածվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի «գ» ենթակետով սահմանված արտոնությունը:

4. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի կայքում:

5. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պաշտոնակատարին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

 Recoverable Signature

X 

ԳԱԼՈՒՍ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN GALUST 1607790106


ԳԱԼՈՒՍ ՊՈՂՈՍՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 095/2021
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕՂԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՕՂԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 095/2021
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF
ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Ազիմուտ» ավիաընկերություն» ԲԸ «Azimuth Airlines» JSC
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	RRJ-95
Հաճախականությունը Frequency	շաբաթական 1 չվերթ 1 flight per week
Երթուղին Air route	Կալուգա/ՍՍՍԲ/-Երևան/ՍԴԿԶ/-Կալուգա/ՍՍՍԲ/ Kaluga/UUBC/-Yerevan/UDYZ/-Kaluga/UUBC/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	18/07/2021 մինչև 24/10/2021 18/07/2021 till 24/10/2021

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
ԳԱԼՈՒՍ ՊՈՂՈՍՅԱՆ
ACTING CHAIR OF CIVIL
AVIATION COMMITTEE
GALUST POGHOSYAN

 Recoverable Signature

X



ԳԱԼՈՒՍ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN GALUST 1607790106

01.07.21

(տալու ամսաթիվը)
(date of issue)